

չէր երեւար թէ Գենուացիները մտած են Կիպրոս, երբ յանկարծ պաշարուեցաւ Գենուացիներէ, եւ առաջնորդուեցաւ Ֆամագոստայի զղեակն իրրեւբանտարիկեալ, Պետրոս Ա.-ի սպանութեան գործին մասնակցած ըլլալու ամբաստանութիւնով (10 հոկտ. 1373) . բայց Լեւոն ինքզինքն արդարացուց եւ ազատուեցաւ բանտէն՝ ստիպուած ըլլալով սակայն վճարել իր վրայ դրուած պատերազմական (գենուակիպրական) տուգանքի բաժինը, որուն համար ծախեց Նիկոսիայի մէջ իր ունեցած կահ կարասիքն ու կնոջը կալուածները, որոնց ամբողջին գումարը հասաւ ճիշտ պահանջուած քանակութեան, այսինքն՝ 36,000 կիպրական բիզանդի (1) : Երբ Լեւոն անգամ մը ազատուեցաւ բանտէն ու վճարեց տուգանքը, ինչորեք Գենուացիներու ծովակալէն որ իր մօրն ու կնոջը հետ Կոռիկոս երթայ ձմեռելու : Հազիւ դժուարութիւնով ձեռք բերաւ այս արտօնութիւնը, եւ իսկոյն հեռացաւ Կիպրոսէն :

1374 թ. ապրիլի 2-ին Լեւոն եւ իրենները հասան Կոռիկոս :

Կոռիկոսի մէջ ալ հանգիստ չունեցաւ Լեւոն. վրան զի իրեն մօտակայ Տարսոնը վերստին ձեռք անցնելու եւ Կիւզնոսի վրայով Կիպրոսէն ու Եւբոպայէն օգնութիւն բերել տալու զիտաւորութիւնով պատրաստութիւններ կը տեսնէր հոն . բայց Կոռիկոսի հրամանատարը, որ Յզիպտոսի սուլտանին դաշնակից էր եւ անկէ գրամական նուէրներ կստանար, մէկ կողմէ Տարսոնի քաղաքակալին մատնեց Լեւոնի զիտաւորութիւնը, իսկ միւս կողմէ Կիպրոսի թագաւորին եւ Գենուացիներուն տեղեկագրեց, որ Լեւոն Կոռիկոսի մէջ կը պատրաստուի Կիպրոսի վրայ յարձակում գործելու : Այս լուրին վրայ Գենուացիներն իսկոյն մասնաւոր մարզիկ զրկեցին Կոռիկոս, որպէս զի Լեւոնը ձերբակալելով Կիպրոս փոխադրեն : Լեւոն իր բարեկամներէն ու կուսակիցներէն իմացաւ այս հրամանը . բայց ի՞նչ ընէր . երկու սուրբ մէջ մնացած էր . եթէ վախէր, հնարաւորութիւն չունէր Սիս մտնելու, եւ պիտի ձերբակալուէր անհաւատներէ (2) . իսկ եթէ հոն մնար, տարակոյս չկայ թէ Գենուացիներու կողմէ բռնուելով նորէն Կիպրոս պիտի տարուէր : Ուստի, ինչպէս կըսեն՝ « երկու չարեաց փոքրագոյնն » ընտրելով, գիշեր ատեն փոքրիկ նաւով մը ճանբայ ելաւ դէպի Սարոսի (գետաբերանը (23 յուլիսի 1374) :

(1) Կիպրոսի բիզանդ կոչուած արծաթի դրամը կարծե՛ք՝ հիմաւուան փողով՝ 4 Ֆր. 80 սանիմ. ուրեմն Լեւոնի վնասած գումարն եր՛ 172,800 Ֆր. :

(2) Այսինքն՝ ոչ-բիսոնեայ :